Արձանագրություն N 6

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 17-ի, ժամը 10.00-ի ընդլայնված նիստի (<Կոնգրես> հյուրանոցի <Պիկասո> սրահ)

Օրակարգ

1. Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակական կարծիքի հարցման ներկայացում
2. «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքային խմբի ծրագրերի ներկայացում
3. «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի կիրարկման մեխանիզմների վերաբերյալ քննարկում/մտքերի փոխանակում

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Օլիվեր ՄքՔոյ	ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարության զարգացման հարցերով պատասխանատու
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Ն. Արզունյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության ՊԱՀԿ և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ
Ն. Դուրյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետի տեղակալ
Տ. Խաչիկյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման զարգացման վարչության վերահսկողության բաժնի աշխատակից
Գ. Ավագյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ
Ա.Ղազարյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու (համաձայնությամբ)

Ա. Հովհաննիսյան	ՄԱԿԾ-ի ժողովրդավարական կառավարման և գենդերային հարցերով պատասխանատու (համաձայնությամբ)
Է. Իսրայելյան	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի երեխաների պաշտպանության ծրագրերի ղեկավար (համաձայնությամբ)
Ա. Այվազով	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի պլանավորման բաժնի ղեկավար (համաձայնությամբ)
Ջ. Սարգիզովա	**փորձագետ** (համաձայնությամբ)
Ծ. Հարությունյան	ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական (համաձայնությամբ)
Գ.Արմաղանովա	<Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա> հասարակական կազմակերպության փոխնախագահ (համաձայնությամբ)
Լ. Ահարոնյան	<Կանանց ռեսուրսային կենտրոն> հասարակական կազմակերպության համանախագահ (համաձայնությամբ)
Դ. Սարգսյան	<Կանանց իրավունքների կենտրոն> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Է. Վիրապյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Թ. Աբրահամյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կանանց հիմնահարցերի բաժնի կրտսեր մասնագետ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հրավիրված այլ անձինք՝ ՀՀ ոստիկանությունից, միջազգային և հասարակական կազմակերպություններից:

Հանձնաժողովի ընդլայնված նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ֆ. Բերիկյանը և ներկայացրեց օրակարգը: Նա նշեց, որ կարևորում է նման ձևաչափով հանդիպումները և քննարկումները, ինչպես նաև միջազգային կառույցների աջակցությունը խնդրի կարգավորման հարցում:

Բացման խոսքով հանդես եկավ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ժողովրդավարության զարգացման հարցերով պատասխանատու Օլիվեր Մքքոյը: Նա դրական գնահատեց վերջին տարիներին կառավարության կողմից

ոլորում ձեռնարկված քայլերը և նշեց, որ իրենց կազմակերպությունը հետաքրքրված է հիմնախնդրով և հնարավորինս կաջակցի, մասնավորապես <<Ընտանեկան բռնության մասին>> ՀՀ օրենքի նախագծի լրամշակման գործընթացին:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ, ի.գ.թ. Աննա Մարգարյանը: Նա ներկայացրեց Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բռնության վերաբերյալ հասարակական կարծիքի վերաբերյալ հարցման արդյունքները: Նա նշեց, որ ՀԿ-ի կողմից կատարված ուսումնասիրության նպատակն էր պարզել, թե որքանով է բնակչությունը ընտանեկան բռնության զոհ դառնալիս վստահում ոստիկանությանը և ոստիկանություն դիմելու պարագայում ինչ արձագանք է ստացվում: Նա ներկայացրեց մի շարք խնդիրներ, որոնք վերհանվել և պարզաբանվել են հետազոտության ընթացքում.

- ընտանեկան բռնության տարածվածությունն ու դրանցից բնակչության տուժելու իրական մասշտաբները,
- ընտանեկան բռնության դրսևորման օրինաչափությունները,
- ընտանեկան բռնության կանխարգելման առումով ոստիկանության գործունեության արդյունավետության վերաբերյալ հասարակական դիրքորոշումը,
- այն գործոնները, որոնք հանգեցնում են բնակչության շրջանում ընտանեկան բռնության,
- այն հնարավոր փոփոխությունները, որոնք հրատապ կերպով պետք է տեղ գտնեն հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում՝ պետական մարմինների գործունեության մեջ՝ ընտանեկան բռնության կանխարգելման առումով: Ելույթի վերջում **Աննա Մարգարյանը** ներկայացրեց հետազոտության արդյունքների հիման վրա արված առաջարկությունները.
- Բնակչության շրջանում իրականացնել տեղեկատվության շարունակական տարածում՝ ընտանեկան բռնության և դրա առանձին դրսևորումների էությունը բացահայտելու, այն կառույցների շրջանակը և դրանց դիմելու կարգը պարզաբանելու նպատակով,որոնց պետք է դիմել ընտանեկան բռնության զոհ դառնալու պարագայում:
- Բարելավել ՀՀ օրենսդրությունը՝ ընտանեկան բռնության համար պատասխանատվություն սահմանող նորմերի, գործող օրենսդրության մեջ տեղ գտած, տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող ձևակերպումների հստակեցման, ընտանեկան բռնության բոլոր դրսևորումների համար պատասխանատվություն սահմանող դրույթների, ընտանեկան բռնության արձագանքման գործուն միջոցների նախատեսման առումով:
- Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը, հասարակական կառույցների դերի ամրապնդմանը, ինչը կբարձրացներ վերջիններիս նկատմամբ

ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց վստահության մակարդակը, կօժանդակի հասարակական կառույցներին ընտանեկան բռնության կանխարգելման գործում:

- Զարգացնել սոցիալական աշխատողների ինստիտուտը, որն անմիջականորեն արձագանքելով հասարակության առավել խոցելի խմբերի խնդիրներին, դրանք չեզոքացնելով, կնպաստի ընտանեկան բռնության կանխարգելմանը:
- Ապահովել սերտ համագործակցություն սոցիալական աշխատողների և ոստիկանության աշխատակիցների միջև՝ ընտանեկան բռնության պայման հանդիսացող գործոնների չեզոքացման ուղղությամբ համատեղ միջոցառումներ իրականացնելու նպատակով:
- Ընտանեկան բռնության կանխարգելմամբ և դրան արձագանքելով զբաղվող ոստիկանության աշխատակիցների շրջանում ավելացնել իգական սեռի ներկայացուցիչների թվաքանակը, հատկապես ուշադրություն դարձնելով մարզային ստորաբաժանումներում վերջիններիս ներկայացուցչությանը:
- Ոստիկանության աշխատակիցների շրջանում անցկացնել հատուկ հոգեբանական պատրաստվածության դասընթացներ, թրեյնինգներ՝ ընտանեկան բռնության զոհ դարձած անձանց հետ գրագետ շփվելու կարողություն ձևավորելու, զարգացնելու համար, ընտանեկան բռնության զոհին առաջնային հոգեբանական աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկատվության ստացումը ապահովելու նպատակով:
- Բնակչության շրջանում տարածել պրոֆեսիոնալների (ոստիկաններ, կրիմինոլոգներ և այլն) կողմից մշակված գրագետ տեղեկատվություն՝ ընտանեկան բռնության դեպքերի ժամանակ ճիշտ վարքագիծ դրսևորելու, ընտանեկան բռնության կանխարգելման նպատակով:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ մասնակիցների կողմից արվեցին հարցադրումներ, մեկնաբանություններ և առաջարկություններ, մասնավորապես, «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքային խմբին առաջարկվեց հաշվի առնել հետազոտության արդյունքները, ինչպես նաև նախորդ տարի ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ մշակված <<ՀՀ-ում գենդերային բռնությունից տուժածների համար ուղղորդման մեխանիզմի ստեղծման վերաբերյալ>> գրքույկի առաջարկությունները:

Օրակարգի 2-րդ՝ «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի կիրարկման մեխանիզմների վերաբերյալ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ Արմինե Թանաշյանը: Նա ներկայացրեց «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքային խմբի աշխատանքները՝ աշխատանքային պլանը և

ժամանակացույցը, միջազգային կառույցների կողմից աջակցության հնարավոր միջոցները: Նա անդրադարձավ այն խնդրահարույց հարցերին, որոնց շուրջ խմբում ծավալվել են քննարկումներ, տարակարծություններ և առաջարկներ: Նա խնդրեց ներկաներին ևս դրանց շուրջ կազմակերպել քննարկում, խնդրին առավել ճիշտ լուծումներ տալու համար:
Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ եղան մեկնաբանություններ և կարծիքներ, մասնավորապես, ընտանեկան բռնության կանխման մեխանիզմների վերաբերյալ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Իգիտություն ընդունել Ա.Մարգարյանի և Ա.Թանաշյանի հաղորդումները:
2. «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքային խմբին՝ հաշվի առնել հետազոտության արդյունքները, ինչպես նաև նախորդ տարի ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ մշակված <<ՀՀ-ում գենդերային բռնությունից տուժածների համար ուղղորդման մեխանիզմի ստեղծման վերաբերյալ>> գրքույկի առաջարկությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**

/22.02.2012թ./